

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՐԳԵՐԻ ՄԵԶ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ

Վաղոց թեն իմ հայացքը Անհայտին է ու նեռվում
Ու իմ սիրտը իմ մարի նետ անհոններն է թափառում,
Բայց կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ դեպի քեզ՝
Սըլկըտում է սիրտըս անվերջ քո թառանչից աղենիզ,
Ու գաղթական զավակներիդ լուս շարքերից ուժասպան,
Ե՛վ գյուղերից, և՛ շեներից՝ տղիտ՝ որ, դատարկ ու խալար,
Զարկված հայրենիք,
Զըրկված հայրենիք:

Խըռնվում են մըտքիս հանդեպ բանակները անհամար,
Տըրորում են քո երեսը, քո դաշտերը ծաղկավառ,
Ու ջարդարար ոհմակները աղաղակով վայրենի,
Ավարներով, ավարներով, խըճուկքներով արյունի,
Որ դարձըրին քեզ մըշտական աև ու սուզի մի հովիտ,
Խեղճ ու լավիան քո երգերով, հայացքներով անժբախտ,
Ողբի՛ հայրենիք,
Որբի՛ հայրենիք:

Բայց նին ու նոր քո վերքերով կանգնած ես դու կենդանի,
Կանգնած խորհուն, խորհրդավոր ճամփին նորի ու հընի.
Հառաշամբով սըրտի խորքից խոր ես խոսում Աստծու հետ
Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարաղեա,
Խորհում ես դու էն մեծ խոսքը, որ տի ասես աշխարհին
Ու պիտ դառնաս էն երկիրը, որ ճըգտում է մեր հոգին—
Հույսի՝ հայրենիք,
Լույսի՝ հայրենիք:

Ու պիտի գա հանուր կյանքի արշալուսը վառ հագած,
Հազար-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,
Կենսաժղակիտ իր շողերը պիտի ժըպտաև առաջին,
Ու պուտներ, որ չեն պըղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,
Իմ նո՞ր հայրենիք,
Հըգո՞ր հայրենիք...

ԱՎԵՏԻՔ ԻՍՍԱՀԱԿՅԱՆ

ԷՅ, ԶԱՆ-ՀԱՅՐԵՆԻՔ

Է՞, չան-հայրենիք, ինչքա՞ն սիրուն ես,
Սարերը կորած երկնի մովի մեջ.
Զրերը անո՞ւ, հովերը անո՞ւ,
Մենակ բալերը արուն-ծովի մեջ:

Քու հողին մեռնեմ, անգի՞ն հայրենիք,
Ա՞յս, քիչ է, թե որ մի կյանքով մեռնեմ,
Երնեկ ունենամ հազար ու մի կայնք,
Հազա՞րն էլ սըրտանց քեզ մատադ անեմ:

Ու հազար կյանքով քու դարդին մեռնեմ,
Բավերիդ մատա՞ն, մատա՞ն քու սիրուն.
Մենակ մի կյանքը թո՞ղ ինձի պահեմ,—
Է՞ս էլ քու փառքի գովքը երգելուն,—

—Որ արտուսի պես վե՞ր ու վե՞ր ճախրեմ
Նոր օրվա ծեզիդ, ազի՞զ հայրենիք,
Ու անո՞ւ երգեմ, բա՞րձր ու զիլ գովեն
Կանաչ արևըդ, ազա՞տ հայրենիք...

ԵՊԻԾԵ ԶԱՐԵՆՑ

ԵՍ ԻՄ ԱՆՈՒԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ


Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բարս եմ սիրում,
Սեր հին սազի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,
Արհանման ծաղիկների ու վարդերի բո՞յրը վասման,
Ու նաիրյան աղջիկների հեզանկուն պարն եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինչ, լիճը լուսե,
Արևն ամուսն ու ձմովա վիշապաձայն բուքը վսեմ,
Մթում կորած խրճիթների անհյուրընկալ պատերը սև
Ու հնամյա քաղաքների հազարամյա քա՞րն եմ սիրում:

Ուր էլ լինեմ—չե՞մ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,
Չե՞մ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,

Ինչքան էլ սո՞ւր սիրոս խոցեն արյունաբան վերքերը մեր—
Էլի՛ ես ոքք ու արևավառ իմ Հապատաճ-յա՛րն եմ սիրոս:

Եմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ ներիաթ չկա.
Նարեկացու, Քուշակի պես լուսապակ ճակատ չկա.
Աշխա՛րն անցի՛ր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա.
Ինչպես անհաս փառքի ճամփա՛ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրոս:



Արագած. Մի տեսարան

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

Ե Ր Ե Վ Ա Ն

Իմ նուշերի մի աչքի մեջ տրդատակերտ չքնաղ Անին՝
Էրեբունի բլին կանգնած՝ ես հայում եմ Երևանին,
Մի աչքովս ես եմ նայում, մի աչքովս նայում առաջ՝
Կըշոում եմ նորն ու նինը՝ զուզ աչքերով կշեռք դառած,
Վեր ու վար են անում, սակայն, երկու թաթերն իմ կշեռքի,
Զուզն էլ քանօղի իրենց վրա վաստակն ունեն նայոց ձեռքի:

Օ՛, չեմ կարող ես մի աշքով նայել ընկած հին հրաշքին,
Ուս ավերակ մի տաճարն էլ հիացմունք է գոռոզ աշքին,
Նորի տված պատառ հաց թեկուզ լինի կաթն էլ իմ մոր՝
Նորից հինը մորս կեսն է, մյուս կեսը ելողն է նոր,
Ընկած մորից երես դարձնե՞մ, լավ է երես դարձնեմ կյանքից,
Լավ է թաղվեմ, քան թե մի կեղծ շշուկ ծնվի իմ շրթունքից:

Ու նայում եմ Երևանին, կանգնած բլրին Էրեբունիի,
Հին Անիս է վերածնվում բարուրի մեջ Երևանի,
Վեր կամարվում ժայռաբարուր հազարագեղ գմբեթվելով.
Մի նոր հայոց հրաշք դառնում՝ մայր Անիին նմանվելով,
Հազար ու մի եկեղեցիք փոխվում են ճյիս պալատների,
Սուրբ զանգերի դողանչի պես ժխտրն է բյուր հապ մուրճերի...
Եղում է նորն հնի ձևից, մասիսաչափ ձվից անմեռ,
Մեծ Տրդատից՝ Թամանյանը, Թամանյանից նորերը դեռ,
Ասես Մեսրոպ Մաշտոցն ինքն է մոնումենտվում նոր արձանով,
Վեր գմբեթվում հազարայուն, հազարածայն Երևանով:

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

ԵՐԳ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Թե հոկտեմբերյան դրոշի փայլից
Չվառվեր ճակատն Արագածի,
Իր մութ այրերում շունչը կիշեր
Այրերի երկիր Հայաստան։
Մեր երդիկներից ծխի մեռ նորից
Չէր հյուսվի բույրը ցորեն-հացի,
Ծեկ ժայռերի մեջ անհույս կհանգչեր
Ժայռերի երկիր Հայաստան։

Կհանգչեր անհուզ և անհիշատակ,
Կմեններ և իր գերեզմանին
Գիր չէր ունենա՝ մեսրոպյան ոսկյա
Տառերի երկիր Հայաստան։
Իր երկինք մտած, բարձր սարերից.
Գլխիվայր կրնեներ վիթերը խոր
Սարերին կանգնած, սարերի տվոր,
Սարերի երկիր Հայաստան։

Բոլոր կողմերից սրարշավ եկող
Վայրի ցեղերին կու կգնար
Դարերից եկած, դարեր վաստակած,
Դարերի երկիր Հայաստան։
Այրումիների դոփյումների տակ
Ճամփերին ընկած քար կմնար
Քարից հաց քամող, քարին թև տվող,
Քարերի երկիր Հայաստան։

Էլ ո՞վ կարող է, ո՞վ կհանդնի
Վայրի մուուցքով դարձնել նորից
Ավերի երկիր, ցավերի երկիր,
Խավարի երկիր՝ Հայաստան,
Երբ իր փառապանձ եղբարձերի հետ
Արև է տանում աշխարհներին,
Արևին թիկնած, արևից շիկնած,
Արևի երկիր Հայաստան։

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԺԱՆԱՊԱՐՀԻ ԿԵՍԻՆ

(Հատվածներ)

Դու պիտի վրեծ առնես ապրելո՞վ,
Ապրելով համա՞ն, հազարապատի՞ն.
Ավերումի դեմ՝ քո ստեղծելո՞վ,
Ավեր Վանի դեմ՝ քո Երևանո՞վ,
Աքսորների դեմ՝ խու անապատից
Նորից տուն դարձող քո քարավանո՞վ,—
Դու պիտի ապրես պատե՞ս, արանո՞վ:

Ծենիքի հանդում մորթված որբի տեղ՝
Աշնակցի հարսի տասնշորս որդո՞վ.
Մշո դաշտի մեջ սկցած խոփի տեղ՝
Քո տրակտորո՞վ, քո ծուփ-ծուփ արտո՞վ,
Մարտուա սարի մարած բոցի տեղ՝
Ցոյն աշխարհ ծնող՝ քո լոյթ կայանով.
Տաթնի կուրցա՞ծ դարանոցի տեղ՝

Բյուր ակնո՞վ ճայռող քո Բյուրականով:
Հայոց արցունքաշ «Կոռնելիի» տեղակ,
Սարեւար փուլած սև-սուգի՝ տեղակ՝
Հախունն, կենաահնիրդ, սիրտը թռննդ
հանող,
Հանձարիդ լուսը աշխարհին տանող
Քո սեգ Սարյանով,
Խաչատրյանով,—
Դու պիտի ապրես այսպե՞ս, սրանո՞վ:
Պատմության երթում անդով, հանապազ
Առաջինների շարքում քայլելով.
Պատմության հանդեպ՝ երեսու միշտ պարզ՝

ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆ

* * *

Մենք փո՞քը ենք, այո՞,
Փոքը՝
Լեռների ծերպից սուրացող
Այն քարի՝ նման,
Որ հովտում ընկած
Ժայռի ո՞ւժն ունի.

Փո՞քը՝
Մեր անսանձ գետակների պես,
Որոնք վիշտսարի ո՞ւժ են ամբարեւ,
Անձանոթ՝ հովտի ծովլ-ծովլ գետերին:

Փո՞քը ենք,
Բայց ինչպես գնդակը՝ փողում,
Ինչպես կաղնու սերմն՝
Արգավանդ հողում.
Ուկու մի հատիկ,
Որ վերսից է ճայռում
Կապարի ու թուշի քաշին.
Մենք փո՞քը ենք,
Սակազն համեմունք ենք մենք,

ՊԱՐՈՒՅՐ ՄԵՎԱԿ

Քո ողջ էությամբ նորին փարվելով,—
Քո մաքատեղով,—
Քո հավատաղով,—
Դու, ի՞մ ժողովորդ, դու ապրել ես,
կա՞ս,

Այսպե՞ս ապրելով...

Քեզմո՞վ եմ ապրում.
Եվ ես՝ բանաստեղծ,

Օրինում եմ բանսոս հետին այս երգով,
Որ աշխարհի մեջ, երկնքի մերքը
Աշխարհը թռղած՝ ծնվել եմ այստեղ
Ու որդին եմ քո...

Աղջ այն մի՛ պտղունց,
Որ համ է տալիս մի ամբողջ մաշի:

Մենք փո՞քը ենք, այո՞,
Զեզ ո՞վ էր սասում

Մեզ սեղմե՞ք այնքան,
Որ մենք ստիպված... Աղամանու դառ-
նանք.

Ո՞վ էր ստիպում՝

Մեզ աստղերի պես ցիրուցան անեք,
Որ միշտ մեզ տեսնեք՝
Ո՞ր ել որ գնաք:

Մենք փոքը ենք,
Սակայն մեր երկրի նման,

Որի սահմանը
Բյուրականից մինչ լուսին է հասնում
Եվ կոսավանից մինչև... Ուրարտու։

Փոքը՝

Այն հրա՞շք Ուրանի նման,
Որ դար ու դարելու,
Փաղո՞ւմ է, շողո՞ւմ,
Սակայն... չի՛ հատնում:

Հպարտ եմ ես նրա համար,
Որ փառահեղ՝ պատմությունը,
Եվ անունը այնքան իին է:
Հպարտ եմ ես նրա համար,
Որ փրկել է թեպես տունը,
Բայց չի խախտվել նրա հիմք:

Հպարտ եմ ես, որ քեզ համար
Որդիները դարեր ընկած,
Որ սուրբ պահեն քո անունը:
Հպարտ եմ ես, որ քեզ համար
Թանը է եղել թանաքն այնքան,
Որքան կարմիր քո արյունը:

Հպարտ եմ ես քո մատների
Ծարտարությամբ անհատնելի,
Քեզ թարգմանող քո գրքերով:
Հպարտ եմ ես անվամբ քո սուրբ,
Լեզվով, որով երբ չես խոսում
Նույն ես ասում քո երգերով:

Հպարտ եմ ես քո անցյալի
Մաքառումով ու պայքարով,
Տոկունությամբ, կամքով համառ;
Հպարտ եմ ես քո պանծապի,
Քո լուսավոր այս ներկայով,
Որ... գալիք է ալլոց համար:

ՎԱՀԱԳՆ ԳԱՎԹՅԱՆՀԱՅՐԵՆԻՔ

Հայրենիք երկիր, հայրենի իմ հող,
Դու՝ մայրական ձեռք՝ օրոցք օրորող,
Դու՝ անոշ խաղն իմ մինչև երեկո,
Իմ շրադացը՝ ուռենու ներքո,
Մորս հեքիաթի հրաշք երկիրը,
Իմ՝ մեսրոպատառ առաջին գիրը,
Հետո իմ սիրո առաջին բառը,
Լուսնյակ գիշերը, այգու պատմեշը,
Այն լավ աղջկա բնքուց նազանքը,
Իմ կարոտանքը, իմ երազանքը...
Ու հետո, հետո այն ամեն մարտուն
Դու՝ կովի տանող դրոշ ու երդում,
Դու՝ կովի տանող ցասում ու հավատ,

Դու՝ անեղծ պատիվ, դու՝ խիղճ անարատ...
Հետո այն օտար դաշտերից մարտի
Դու՝ ինձ տուն կանչող հեռավոր բարդի,
Դու՝ իմ լեռնային ջինջ լուսաբացը,
Դու՝ իմ կրակը, գիճին ու հացը,
Դու՝ մաքր' ը-մաքր' որ ծպիտն իմ մանկան,
Դու՝ իմ անցյալը, դու՝ իմ ապագան,
Իմ հպարտությունն, իմ ներշնչանքը,
Դու՝ ամբողջ, ամբողջ, ամբողջ իմ կյանքը...

ԱԼԻՍԻԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԱՄԱԿ ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Երկիր Հայաստան,
Ես քեզ գրում եմ
Բաւենոս-Ալյես հեռու քաղաքից,
Մեր բաժանումից երկու տարի անց:

Նվ հուսով եմ ես,
Որ իմ նամակը
Քո արևներին
Ու քո լեռներին դու պիտի կարդաս,
Ինձ պատասխանի պիտի ջրերդ՝
Մտերիմները
Քո արմատների...
Ինձ պատասխանի պիտի քո ոգին
Նվ պատասխանի իր մեկ ու միակ
Այն ճշմարտությամբ,

Որ ի՞նձ է նաև:
Երկիր Հայաստան,
Դու կանչում ես ինձ,
Քեզ է պահանջում ու քեզ է կանչում
Նաև արյուն,
Ես ինձ տանջում է տենդը սպասման:

Ուրիշ, այլ սերեր
Հուզում են միայն
Ակնթարթները իմ ժամանակի,
Քոնն է, Հայաստան,
Ողջ անձեռնամուխ իմ ժամանակը
Ես ամենաաջին
Իմ արտասուբը:

Երկիր Հայաստան,
Երբ ես ուզում եմ քո անունը տալ,
Իմ մեջ զարթօնում է մի թաքուն աղոթք՝
Ամենաթինը,
Երբ քեզ եմ երգում,
Իմ մեջ շարժումն է
Սկսում թշիջն իմ ամենանոր:

Զգիտեմ, ճշա՞մ,
Թե՞ արտասուբիս խառնեմ լոելյալն
Կարուիս ցավը,
Որ անանուն է:

Երազում եմ քեզ,
Ես էության թափանցիկ ամպը
Քեզ է միանում
Ես գնում հավերժ մի լողարկության:

Դեռ քեզ չտեսած,
Ծանաչում էի ես քո քարերը,
Հետո քեզ տեսա,
Քեզ շոշափեցի,
Ծնչեցի ես քեզ,
Լուծվեցի ջրում
Ես փոշի դարձա քամիներիդ մեջ:

Գիտես,
Իմ ու քո միասնությունը
Վաղընչական է:
Ես կամ առաջին քո հուշերի մեջ:

Ապրել եմ ես քո
Հողմակոծ նողում
Որպես անխոսափ մի ճակատագիր:
Եվ պիտի մի օր վերադառնայի
Դեսի սկիզբու,
Գտնելու համար անմեղությունն իմ
Ու էությունն իմ՝
Անդաշն աշխարհի
Հարաբերական
Այս խաղերի մեջ:

Ես այդ աշխարհից
Գալիս եմ ամա,
Որ օրենքըները ի կատար ածեմ՝
Իրերի շարժման օրենքըները պարզ:

Քանզի այն ամենն,
Ինչ որ պատմում է
Մայր հողի մասին
Ու արյան մասին,
Ամպի ու լեռան,
Հացի ու փառքի,
Աղի ու լուսի,
Երածոտության,
Բանաստեղծության,
Արցունքի մասին,
Անդունի մասին,
Սարսուի մասին,
Ու քարի մասին,
Ինձ քո մասին է պատմում շարունակ:

Ձէ՞ որ ես տեսա,
Թէ Հրազդանը
Բարի ու ջրի հավերժ բախտումով
Ինչ է նկարում,
Եվ ամպերի տակ տեսա բարախը
Արարատ լեռան:
Արարատ լեռը՝
Անեղ մի պայմանուն,
Որ ինձ հրկիզեց
Սուանց լավայի...
Ինձ հարց են տայիս.
«Հայաստանն ի՞նչ է»...
Բայց մի՞թե այդքան հեշտ է բացատրել
Ամբողջությունը,
Մի՞թե հավատը մեկնարանել է,
Թե ի՞նչ է Աստված...
Եվ ինչպես պատմել սարսուի մասին,
Հավատքի մասին,
Եվ էռոթյունը ինչպես մերկացնել,
Ցույց տալու համար
Կերպարը սիրու:
Հիմա ես ու նա
Միասնություն ենք
Ե՞վ ամբողջությամբ մեր ճշմարտության
Ե՞վ եթերային լվեր երազներով,
Անցյալի դեմքով տանջահար ու հեգ

Եվ մերմակ ու ջերմ օրորոցներով:
Եվ պահանջ չունենք խոսի ու քառի,
Զի հոգիները լուրջան մեջ են
Միանում իրար:

Երկիր Հայաստան,
Ես բարձրացել եմ քո փառքի թեուլ,
Քո կորուսներով եղել արմաքամ,
Ալորել եմ ես քո մայունի հետ,
Քո վերքերի մեջ կայիծ եմ եղել,
Ծնունդներիդ մեջ՝ բերկրություն մի՝
պարզ:

Հինգ հազար տարի
Քո տառապանքի հետ եմ ես եղել:
Եվ այս ամենը ինչպես բացատրել
Այն մարդկանց, որոնք
Ինձ հարց են տալիս.
«Հայաստանը քեզ դո՞ւր եկավ արդյոք»:

Ու ես այդ մարդկանց ուզում եմ ասել.
—Ես Հայաստանը ապրում եմ, մարդկեւ,
Ապրում եմ նրա հնագույն մաշկով,
Բույրով մենավոր
Եվ գգում նրան իմ արմատներով:

Ես չգնացի նրան տեսնելու ու
հավանելու,
Գնացի այնտեղ նորից ծնվելու
Եվ որոնելու լոյսն իմ համանական
Եվ ակնելու իմ զրո դարից:
Դու, որ ինձ գիտես
Եվ հականում ես իմ ճիշը անգամ,
Գիտե՞ս, թե որքան դժվարանում եմ
Քո մասին խոսել
Աշխարհիկ լեզվով.—

Մեր հանդիպումը
Ամենավերին
Երկինքներում է,
Որտեղ խոսում են,
Սակայն չեն գգում բայերի կարիք:

Եվ դրա համար
Ես իմ լուրջան աղոթքներով եմ
Միշտ քեզ ողջունում,
Ի՞մ ինքնապատկեր:

Ու քեզ օրինելով,
Ես ինձ եմ օրինու,
Քեզ վերապրելով,
Վերապրում եմ ինձ,
Եվ ճիս, ճիս
Այդ դու ես, որ կաս,
Հայրենի իմ ճող
Եվ իմ դրոշակ՝
Երկիր Հայաստան:

Թարգմ.՝ ՎԱՀԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ